| Call register (Menu 2) | **Զանգերի մատյան (Ցանկ 2)** |
|---|---|
| The phone registers the phone numbers of missed, received and dialled calls, and the approximate length and cost of your calls. | Հեռախոսը գրանցում է չպատասխանած, ստացված և կատարված զանգերի հեռախոսահամարները, ինչպես նաև կատարված զանգերի մոտավոր տևողությունը և արժեքը: |
| The phone registers missed and received calls only if the network supports these functions, the phone is switched on and within the network's service area. | Չպատասխանած և ստացված զանգերը գրանցվում են միայն այն դեպքում, երբ ցանցը դրա հնարավորությունն ունի, հեռախոսը միացած է և գտնվում է ցանցի ազդանշանների տարածման շրջանում: |
| When you press **"Options"** in the **"Missed calls"**, **"Received calls"** and **"Dialled numbers"** menu, you can view the date and the time of the call, edit or erase the phone number from the list, save the number in the phone book, or send a message to the number. | Սեղմելով «**Հարկանիշները**» «**չպատասխանած զանգեր**», «**ստացված զանգեր**» **և** «**հավաքած համարներ**» ցանկում՝ կարող եք պարզել տվյալ զանգի օրը և ժամը, փոփոխել կամ ջնջել հեռախոսի համարը, մտցնել այն հեռախոսագրքի մեջ կամ ուղերձ ուղարկել այդ համարի վրա: |
| ***Missed calls and received calls*** | ***Չպատասխանած զանգերը և ստացված զանգերը*** |
| To view the list of the last ten phone numbers from which somebody has tried to call you (network service), press **"Menu"**, select **"Call register"** and **"Missed calls"**. | Եթե ցանկանում եք դիտել վերջին տաս համարները, որոնցից փորձել են Ձեզ զանգահարել (ծառայությունը տրամադրում է ցանցը), սեղմեք «**Ցանկ**», ընտրեք «**Զանգերի մատյան**» և «**Չպատասխանած զանգեր**»: |
| ***Tip:*** *When a note about missed calls is being displayed, press* ***«List»*** *to access the list of phone numbers. Scroll to the number you would like to call back and press.* | ***Հիշեք՝*** *Երբ էկրանի վրա հաղորդում է հայտնվում չպատասխանած զանգի մասին, հարկավոր է սեղմել* ***«Ցուցակ»*** *և էկրանին հայտնված հեռախոսահամարների միջից գտնել այն համարը որի վրա ցանկանում եք զանգահարել և սեղմել այն:* |
| To view the list of the last ten phone numbers from which you have most recently accepted calls (network service), press **"Menu"**, select **"Call register"** and **"Received calls"**. | Եթե ցանկանում եք դիտել ստացված վերջին զանգերի համարները (ծառայությունը տրամադրում է ցանցը), սեղմեք «**Ցանկ**», ընտրեք «**Զանգերի մատյան**» և «**Ստացված զանգեր**»: |
| ***Dialled numbers*** | ***Հավաքած համարներ*** |
| To view the list of the 20 phone numbers that you have most recently called or attempted to call, press **"Menu"**, select **"Call register"** and **"Dialled numbers"**. *See also on page 19 and 98.* | Եթե ցանկանում եք դիտել վերջին 20 համարները, որոնցով զանգել եք կամ փորձել եք զանգել, սեղմեք «**Ցանկ**» , ընտրեք «**Զանգերի մատյան**» և «**Հավաքած համարներ**»: *Տես նաև էջ 19 և 98:* |
| ***Erase recent call lists*** | ***Մաքրել վերջին զանգերի ցուցակը*** |
| To erase the recent calls lists, press **"Menu"**, select **"Call register"** and select **"Erase recent call lists"**. Select whether you want to delete all the phone numbers in the recent call lists, or only those numbers in the missed calls, received calls or dialled numbers lists. You cannot undo the operation. | Վերջին զանգերի ցուցակը մաքրելու համար, սեղմեք «**Ցանկ**», ընտրեք «**Զանգերի մատյան**» և սեղմեք «**Մաքրել վերջին զանգերը**»: Կարող եք ընտրել, թե ինչը մաքրել՝ բոլոր հեռախոսահամարները, թե միայն չպատասխանած, ստացված կամ հավաքած համարները: Այս գործողությունը հնարավոր չէ հետադարձել: |

**Henrik Pipoyan, Freelance Translator**
19/1 Vagharshyan street, # 15, Yerevan, 375012, Armenia
**Tel./Fax:** +374 (1) 22-35-60, **E-mail:** Henrik@Pipoyan.com
**Online Resume:** www.pipoyan.com/trans/